## ՊԱՏԱՍԽԱՆ ԹՈՒՐՔ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԻՆ

**«Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր» հանդեսը, իր բնույթով լինելով գիտական-պատմագիտական, նպատակահարմար է համարում շրջանառության մեջ դնել ներկա հրապարակումը՝ ի պատասխան թուրք «մասնագետների», փաստերի իրողությունների խեղաթյուրման հերթական «միջոցառման»: Խոսքը ներքո ներկայացվող՝ ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության քանգարան-ինստիտուտի անօրեն պատմական գիտությունների դոկտոր Լավրենտի Բարսեղյանին մի նամակի և այդ նամակի պատասխանի մասին է: Որպես սթափ փաստերի, արխիվային, փաստական նյութերի հիման վրա, զուտ գիտական-պատմագիտական մոտեցումը, կերպը, ոճը որդեգրած պարբերական, հանդեսը շրջանառության մեջ է դնում վերոհիշյալ իրողությանը վերաբերող վեց փաստաթուղթ՝ ցեղասպանությունը վերապրածների վկայությունները և արխիվային նյութեր, առանց պատմագիտական մեկնաբանումների:**

### ԹՈՒՐՔ ՊԱՏՄԱԳԵՏՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՇՈՐԻՆ

Ս/թ. հունիսի 10-ին ԳԱԱ Հայոց ցեղասխանության քանգարան-ինստիտուտում ստացվեց ներքո ներկայացվող նամակը:

*«Հարգելի դոկտոր, պրոֆեսոր Լավրենտի Բարսեղյան, արխիվային փաստաթղթերի համաձայն, հայկական բանդաները Կարսի մարզի Դերեչիկ գյուղում 1918թ. սպանել են 360 մահմեդականի: Արխիվների և գրականության մանրակրկիտ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ 1918թ. ապրիլի 15-16-ը 371 մահմեդականների, մեծ մասամբ կանանց և երեխաների, հավաքել են հարդանոցում և հրկիզել: Նրանցից 360-ը ոչնչացվել է և միայն 11-ին է հաջողվել փրկվել:*

*Այդ միջադեպի վայրը վերածվել է զանգվածային գերեզմանոցի, ինչը հայտնի է դարձել արխիվային հետազոտությունների հետևանքով: Թուրքական պատմագիտական ընկերակցու-*

*թյունը 2003թ. հունիսի 31-ից հուլիսի 1-ը սկսելու է այս զանգվածային գերեզմանոցի պեղումները:*

*Մենք ցանկանում ենք հրավիրել Ձեզ՝ վկա գտնվելու այս զանգվածային գերեզմանը բացելու աշխատանքներին: Այս առիթով մենք շնորհակալ կլինենք, եթե Դուք կարողանաք տեղյակ պահել մեզ Ձեր մասնակցության մտադրության մասին մինչև 2003թ. հունիսի 20-ը:*

*Ձեր ապրուստի ծախսերը կհոգա Կարսի մեր ընկերակցությունը:*

*Անկեղծորեն Ձեր՝ Յուսուֆ Հպաջողլու:*
*Թուրքական պատմագիտական ընկերակցության նախագահ, պրոֆեսոր»:*

Հունիսի 20-ին Լավրենտի Բարսեղյանը հետևյալ պատասխան նամակով դիմել է թուրք պատմաբանին.

*«Հարգելի պրոֆեսոր, ստացա Ձեր հրավերը՝ 2003թ. հունիսի 30-ից հուլիսի 1-ը Կարսում լինելու մասին:*

*Ցավոք, չեմ կարող մասնակցել Ձեր և Կարսի նահանգի ղեկավարության կազմակերպած շրջանին, որը կրկին վկայում է, որ Ձեր կառավարությունն ու թուրք պատմաբանները շարունակում են նենգափոխել պատմությունը և ճշմարտությունը:*

*Հավանաբար կազմակերպվող պեղումներին Դուք պետք է առաջին հերթին հրավիրեիք մասնագետ մարդաբանների, ովքեր կարող էին հավաստել, թե պեղումներից հանված նյութերը կարճագանգ կամ երկարագանգ ռասայի ներկայացուցիչներից որին են պատկանում:*

*Ես պատրաստվում եմ Ձեզ ավելի ընդարձակ բաց նամակ հղել, տակայն պարտքս եմ համարում թուրք պատմաբաններին հիշեցնել, որ 1918թ. մարտի 12-ին թուրքական զորքերն Էրզրումը գրավելուց հետո Քյազիմ Կարաբեքիր փաշայի հրամանատարությամբ շարժվեցին դեպի Կարս: Թուրքական բանակն ապրիլի 26-ին գրավեց Կարսը և շուրջ մեկ ամսվա ընթացքում, Էրզրումից մինչև Կարս հասնելը, ողջ ճանապարհին ոչնչացնում էր հայ բնակչությանը: Զոհերի թիվը կազմեց մի քանի տասնյակ հազար հայ բնակիչ: Ի դեպ, միայն 1918-1920թթ. ընթացքում, Արևելյան Հայաստան կատարած թուրքական արշավանքների հետևանքով, մի շարք բնակավայրերում թուրքերն իսպառ բնաջնջել են հայ բնակչությանը:*

*Այսօր էլ տարբեր բնակավայրերում շինարարական աշխատանքների ժամանակ հայտնաբերում են զանգվածային թաղումների հետքեր, և եթե Դուք անձամբ ցանկություն ունեք ականա-*

*տես լինելու խմբակային քաղումների գերեզմանների բացմանը, ապա ես սիրով հրավիրում եմ Ձեզ և ինձ վրա եմ վերցնում Հայաստանում գտնվելու հետ կապված Ձեր բոլոր ծախսերը:*

*Խնդրում եմ սպասել իմ հաջորդ գրությանը:*

*Հարգանքներով՝ Լավրենտի Բարսեղյան:*

*Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր»:*

Ընթերցողներին է ներկայացվում Լ. Բարսեղյանի նամակում նշված փաստերի մասին վերապրածների վկայությունները և երկու արխիվային փաստաթուղթ:

## Հայոց ցեղասպանության մի հիշարժան փաստի մասին

ՎԱՀԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

1915-23 թվականների Մեծ եղեռնի՝ Հայոց ցեղասպանության մասին գրվել են ու դեռ կգրվեն պատմական, քաղաքական, փաստագրական բազում աշխատություններ, ականատեսների վկայություններ: Գոյություն ունեցող փաստերի կողքին իմ ներկայացնելիք ողբերգական իրողությունը չափերով, զոհերի թվով թեև համեմատաբար ավելի նվազ է, բայց կատարման եղանակով այնպիսի նախանձելի է, որ կարող է գերազանցել ամենասոսկալի երևակայությունն անգամ:

Խոսքս 1920 թվականի աշնանն Ալեքսանդրապոլի գավառի Աշոցքի սարահարթի (նախկին Դուկասյանի շրջան) Վարդաղբյուր գյուղի 196 կանանց, երեխաների, ծերերի ողջակիզման մասին է: Գյուղը գտնվում է հինավուրց տարանցիկ ճանապարհների խաչմերուկում: Գյումրիից Ախալքալակ և դեպի Տաշիր-Թբիլիսի մայրուղիներն անցնում են այդ գյուղի միջով: 20-րդ դարի հիսուն-վաթսունական թվականներին դեռ ապրում էին այն կենդանի մնացածներից շատերը, որոնց հարազատներն էին ողջակիզված անմեղ զոհերը: Իմ սերունդը, որ կատարված ողբերգությունից հետո էր ծնվել, դարձյալ անտարբեր չէր կարող լսել ժամանակակիցների պատմությունները: Չէ որ չկար մեզնից մեկը, որ ողջակեզների մեջ հարազատներ չունենար:

Ահա՝ անցյալ դարի դարասկզբի փոքրրկահույզ ժամանակների իրադարձությունների հետևանքն էր այն զարհուրելի նախճիրը, որ 1920 թվի աշնանը կատարվեց Վարդաղբյուր գյուղում՝ քեմալական զորքերի ձեռքով: Այդ ժամանակ այդ սարսափելի ոճրի՝ ողջակիզման զոհ գնացին Վարդաղբյուր գյուղի 196 բնակիչ՝ հիմնականում կանայք, երեխաներ, ծերեր: Սակայն նրանց մեջ կար մեկը՝ Բալոյան Արտաշեսը, որ միակ փրկվածն էր ողջակիզման այդ ոճրից: Նա եղել էր այն կենդանի վկան, որի աչքերի առջև կատարվել էր այդ սոսկալի եղեռնը:

Իմ պատանեկության տարիներին, երբ դեռ գյուղում էի բնակվում, համագյուղացիներից բազմիցս լսում էի այդ սարսափելի ողբերգության պատմությունը: Հետագայում, երբ ավարտել էի բանասիրական ֆակուլտետը, իմ մեջ միտք հղացավ ականատեսի բերանից լսել ու գրառել այդ սոսկալի ոճրի պատմությունը, և ես այդ խնդրով դիմեցի Արտաշես Բալոյանին: Պայմանավորվեցինք հանդիպել գյուղի կենտրոնի աղբյուրի մոտ: Աղբյուրը եկեղեցու մոտ էր, իսկ դիմացը՝ այն մեծ փոսորակն էր, որն իր տակ ամփոփում էր 196 անմեղ զոհերի աճյունները: (Վաթսունական թվականներին այդ ընդհանուր

գերազմանի վրա իմ համագյուղացիները կառուցեցին մի հոսմետռ հուշարձան):

Հաջորդ առավոտ՝ պայմանավորված ժամին, հանդիպեցինք պայմանավորված վայրում, ու նա ակամատեսի մանրամասներով պատմեց իր համագյուղացիներին բաժին հասած այդ դաժան ողբերգության մասին:

Ահա՝ իմ գրառած վկայությունն այս սարսափելի ոճրի մասին:

* * *

*«1918 թվին արդեն տեսել էինք երիտթուրքերի վայրագությունները՝ թալանը, ավերածությունները, կոտորածները: 1919 թվին, երբ նրանք հեռացան, հուսով էինք, թե էլ չեն վերադառնա, բայց հայի սփոփանքը լոկ հույսն է եղել:*

*1920-ի ամռանը լուրեր տարածվեցին, թե թուրքական զորքերը կրկին գրավել են Ալեքսանդրապոլը և շարժվում դեպի գավառի գյուղերը: Գյուղացիները սարսափով էին սպասում նրանց հայտնվելուն, ովքեր հնարավորություն ունեին, հեռանում էին Լոռվա կամ Վրաստանի կողմերը: Շատ ընտանիքներում տղամարդ չկար: Ոմանք դեռ պատերազմի սկզբում զորակոչվել էին ցարական բանակ, ոմանք դաշնակցական բանակում էին, ոմանք սպանվել էին դեռ 1918-ին կամ ընտանիքներով հեռացել: Գյուղում մնացել էին կանայք, երեխաներ և ծերեր:*

*Գյուղերում տով էր սկսվել: Աշնան սկզբներին թուրքերը մտան մեր սարահարթի գյուղերը: Սրանք էլ նույն ասկյարներն էին, միայն սրանց անվանում էին քեմալականներ, որ ավելի բիրտ ու դաժան էին, քան նախորդները: Նրանք տեղավորվում էին գյուղացիների տներում՝ տերերին քշելով գոմերն ու մարագները, որ դատարկ էին սրանց նախորդների թալանի հետևանքով: Մեր տանն էլ տեղավորվեցին երեք ասկյար, որոնցից մեկը հավանական է՝ զինվորական բարձր կոչում ուներ, քանի որ հրամայելով էր խոսում մյուս երկուսի հետ: Մի քանի օր անց սա մի հայ կին բերեց: Մենք չգիտեինք՝ նրան ասկյարը բռնությամբ էր բերել, թե կինը, որ բավականին հմտակրելի արտաքին ուներ, իր կամքով էր եկել, գիտենք միայն, որ նա մեր հարևան գյուղից է: Գյուղի կանայք նրան մի տեսակ զայրույթով էին նայում:*

*Հետագա մի քանի օրերը խաղաղ անցան, դաժան դեպքերը դեռ առջևում էին:*

*... Մի օր առավոտյան ահավոր իրարանցում ընկավ գյուղում: Թուրք ասկյարները գյուղում մնացած բոլորին՝ կանանց, երեխաներին, ծերերին հրացանների ու մտրակների առաջն արած քշում էին Գևո տացուի տունը, գոմն ու մարագը, որ ամենամեծն էին գյուղում: Մարդիկ բնազդորեն կասեցնում էին, որ վատ բան է կատարվելու, դիմադրում էին, չէին ուզում գնալ, բայց թուրքերը բռնությամբ, մտրակներով, հրացանի կոթուններով ու սվիններով, հայհոյելով նրանց քշում էին դեպի Գևո տացուի գոմը:*

*Ես այդ բոլորը տեսնում էի մեր բակի դռան բացվածքից: Հուսով էինք, թե այդ կնոջ շնորհիվ մեր տունը չեն գա, բայց շատ չանցած թուրքերը լցվեցին մեր տունն ու նույնպիսի բռնությամբ մերոնց էլ սկսեցին տանել: Ընդհանուր խառնակության, լացուկոծի միջոցին մեր տան մեծավոր թուրքն ու նրա հայ կինը մոտեցան ինձ, թուրքն ինձ հասկացրեց, որ հետևեմ իրեն. նա ինձ տարավ գոմը և տիպեց, որ անշարժ, անձայն պառկեմ մսուրի մեջ: Ես բնազդորեն կատարեցի նրա ասածը: Ինձ մոտ կանգնել էր այն հայ կինը և խնդրում էր տեղիցս չշարժվեմ: Մինչ ես թաքնվել էի մսուրում, թուրքերը մերոնց էլ տարան Գևո տացուի գոմը:*

Երբ նրանց լացուկոծի ձայները հեռացան, այլևս քաքնվել չկարողացա, գոմից դուրս եկա միջանցք, մոտեցա բակի դռանը, որը դրսից փակված էր, ու դռան բացվածքից ականատես եղա այդ դաժան եղեռնին:

Գոմի ու մարագի շուրջը, ուր քշել էին գյուղի բնակիչներին, զինված ասկյարներ էին կանգնած, որպեսզի ոչ մեկը փախչելու փորձ չանի: Շատերի շորերը պատառոտված էին, մազերը գզգզված, դեմքերն՝ արյունոտ:

Ես երկյուղից քարացած՝ նայում էի ու չէի հասկանում, թե ինչ են ուզում անել: Մինչ ներսից լսվում էր կանանց ու երեխաների լաց ու աղաղակի խուլ գվվոցը, ասկյարներից մի քանիսը բարձրացան կտուրները, որտեղ նախօրոք, երդիկից բացի, մի քանի լայն անցքեր էին բացել և խոտի կույտեր դարսել անցքերի մոտ: Նրանք կտուրի անցքերից ինչոր հերուկ էին շաղ տալիս ներսում գտնվողների վրա: Երբ բավականաչափ ամաններ դատարկվեցին, նույն հերուկից շաղեցին նաև կիտված խոտերի վրա և վառեցին: Այրող խոտերը նրանք անցքերից ներս էին թափում: Կանանց ու երեխաների աղաղակները սաստկացան: Սոսկալի էր այրվող ու ծխախեղդ մարդկանց վայնասունը:

Մինչ ես քաշքշում էի, որ բացեմ դուռը, հայ կինը՝ սարսափից դողալով, լացակումած համոզում էր ինձ, որ հեռանամ դռնից ու չտեսնեմ այդ դժոխային տեսարանը:

Հանկարծ դրսից դռները բացվեց, ու ներս մտավ մեր տանն ապրող մեծավորը: Ես ճարպկությամբ պոկվեցի կնոջ ձեռքերից և սկսեցի վազել դեպի այրվող տունը: Սակայն ինձ հասավ նույն ասկյարը, բռնեց ինձ և ուժով ետ բերեց տուն:

Ես խելագարի նման բառաչում էի, թավալվում, աշխատում էի պոկվել նրա ձեռքերից ու վազել դեպի այրվող տունը, գոմը, մարագը, ուր կրակի մեջ վառվում էին մայրս, եղբայրներս ու քույրերս, մերոնք, ողջ գյուղը: Պարզ տեսել էի կտուրների անցքերից դուրս ժայթքող բարձր, բոցախառն ծուխը, լսում էի այրվողների գոռում-գոչյունը, լացն ու վայնասունը, բայց ի՞նչ պիտի անեի ես: Հետո երևի կորցրի գիտակցությունս, ընկել էի անզգա վիճակի մեջ: Այս վիճակի մեջ ինձ տարել էին ու պառկեցրել թոնրատանը:

Չգիտեմ որքան էի մնացել այդ ցնորական մղձավանջում, երբ գիտակցությանս հասան իրական աշխարհի ձայները: Անմիջապես սթափվեցի, և կրկին աչքերիս առջև ծառացավ դժոխային իրականությունը՝ իր ողջ սարսափով:

Միանգամից վեր թռա տեղիցս, մթության մեջ խարխափելով դուրս վազեցի թոնրատնից դեպի բակի դուռը. այն կրկին փակ էր դրսից: Իմ հետևից դուրս վազեց այն կինը, որ ամբողջ ժամանակ հսկել էր ինձ՝ իմ այդ դրության մեջ: Դրսում աղջամուղջ էր, չգիտեմ՝ նոր էր մթնում, թե նոր էր լուսանում, ասենք դրա անհրաժեշտությունը չէի էլ զգում, միայն դռան ճեղքերից տեսնում էի, որ դժոխային գործողությունը շարունակվում էր: Ըստ երևույթին տանիքը փուլ էր եկել, գերանները ճարճատում էին, թանձր ծուխը՝ հրային կայծերով տարածվում էր գյուղի վրա: Բոցախառն կայծերի հետ օդի մեջ տարածվել էր մարդկային խանձահոտը:

Ինձ թվում էր, թե կխելագարվեմ: Բայց, ըստ երևույթին, նախախնամությունը կամեցել էր, որ ես ապրեմ, որպեսզի այս ամենը պատմեմ նրանց, ովքեր այս անմեղ զոհերի հարազատներն էին: Եվ ինչո՞ւ միայն նրանց, երևի թե բոլորին, ողջ մարդկությանը:

Ընդարմացել էր զգացողությունս, չէի զգում օրերի վազքը,

նրանք անցնում էին իմ կողքով՝ ոչ մի հետք չթողնելով իմ վրա: Դարձել էի բոլորովին անտարբեր, ոչնչի չէի սպասում. ամեն ինչ կորցրել էր իր իմաստը: Նույնիսկ չէի կարողանում նայել այն անտվոր գերեզմանոցին, որն իր մեջ քաքցնում էր այնքան թանկագին հարազատներիս... Ու ընկնում էի ցնորքների աշխարհը: Ապրում էի ինքս իմ մեջ, իմ վշտիս մասնակից չդարձնելով նույնիսկ այն կնոջը, որ մայրական հոգատարությամբ գուրգուրում ու խնամում էր ինձ: Անվոր ատելություն ու վրեժ էր կուտակվում իմ փոքրիկ սրտի մեջ:

Այն ժամանակ մենք դեռ մինչև վերջ չգիտեինք, թե ինչ էր տեղի ունեցել արևմտահայ մեր հայրենակիցների հետ, և որ իմ ատելությանն ու վրեժին պետք է գումարվեր մեծ, շատ մեծ ու հզոր վրեժ, որպեսզի հատուցվեր չարագործների ոչնչով չարդարացված չարագործությունները: Հետո՝ ավելի ուշ, հասկացանք, որ աշխարհը խուլ է մեր ողբի հանդեպ՝ մենք միայնակ ենք կրելու մեր դաժան վիշտն ու ցավը, իսկ վրեժ լուծել անկարող ենք:

Ժամեր էր արդեն: Աշոցքի ձմեռը շատ խիստ է լինում: Այդ տարվա ձմեռն էլ առատորեն տեղացած ձյունով ծածկել էր այրված-քանդված տունը, գոմն ու մարագը, և այն մեծ փոսորակը, որ անմեղ զոհերի անտվոր գերեզմանոց էր, մնացել էր հաստ ձյունաշերտի տակ. կարծես ոչինչ չէր եղել...

Թուրքերն աստիճանաբար լքում էին մեր ամայացած գյուղը: Ինձ խնամող կինն ասաց, որ մեր տանն ապրող թուրքը մտադիր է ինձ համոզել, տանել իր հետ, ավանդափոխել ու իր որդին դարձնել: Ես սարսափեցի այդ մտքից և վճռականորեն ասացի, որ երբեք այդ քայլին չեմ դիմի, երբեք մեր դահիճների մեջ չեմ ապրի, թեկուզ դրա համար ինձ սպանեն: Կինը նրան ասաց իմ մերժման մասին: Ըստ երևույթին թուրքը դա բնական էր համարել ու բռնության չդիմեց: Մինչև օրս էլ ես շնորհակալ եմ նրանից, որ ինձ չհարկադրեց գնալ իր հետ:

Ժմռան ամիսներն ավարտվել էին, բայց բուքն ու մրրիկը շարունակվում էին նույն ուժգնությամբ: Մեր տանը բնակվող ասկյարին մենք այլևս չտեսանք: Փաստորեն նա լքել էր նաև այդ կնոջը, որ խնամում էր ինձ: Լավն այն էր, որ այդ ծանր տարիներին թուրքը մեզ համար որոշ սննդամթերք էր թողել: Մի ամիս էլ դրանով ապրեցինք: Կինը գիտեր, որ հարևան գյուղում ես մորաքույր ունեմ, նույնիսկ ճանաչում էր նրան: Ես խնդրեցի, որ ինձ տանի մորաքրոջս մոտ: Ապրիլյան մի խաղաղ առավոտ մենք ճանապարհ ընկանք մորաքրոջս գյուղը: Երբ տուն մտանք, մորաքույրս հանկարծակի եկավ, ճչաց, վեր թռավ, գրկեց ինձ, համբուրում էր ու լացի հետ անընդհատ կրկնում էր. «Էս ինչդ եղավ, հրպը կսեին ոչ մեկը չի՞ փրկվե, ինչը՞դ դու փրկվեցիր»... Ինձ խնամող կինը պատմեց ողջ եղելությունը, չէ որ ինքն էլ էր ականատես: Մորաքույրս շնորհակալ եղավ այդ կնոջից, որ մոր նման ինձ խնամել էր այդ սարսափելի օրերին: Հարևաններ հավաքվեցին, կսկծացին, մխիթարեցին մորաքրոջս ու գնացին: Նրա ամուսինը ևս չկար, դեռ 1914 թվին զորակոչել ու տարել էին ռազմաճակատ, լուր չկար: Մորաքույրս մնացել էր իր երկու փոքր երեխաների հետ:

Մեր սարահարթի գարունը միանգամից է սկսվում. ողջ դաշտը դառնում է ձնհալից զորացած մի հսկա ծով՝ իր մեջ լողացող մեծաքիվ ու մեծազանգված ձյունահյուսքերով ու սառցարեկորներով: Սակայն ականատեսների պատմելով՝ 1921-ի գարունն ավետող ձնհալի սառցաջրերում ձյունահյուսքներից ու սառցազանգվածներից բացի լողում էին նաև

*մարդկային դիակներ...*

*Մնացել էր մի աղոտ հույս. գուցե գյուղից հեռացած, կենդանի մնացած մարդիկ՝ միայնակ կամ ընտանիքներով, վերադառնան, գյուղը նորից գյուղ դարձնեն, շենացնեն: Գարնան բացվելու հետ բացվեցին նաև ճանապարհները, գնացող-եկողը շատացավ, լուրեր տարածվեցին, թե թուրքերն արդեն հեռացել են, որ նոր իշխանություն է եկել, գյուղերից հեռացած, կենդանի մնացած մարդիկ մենակ կամ ընտանիքներով վերադառնում են: Մոտաքրքրջս գյուղացիներից էլ շատ զորացրված զինվորներ ու փախստականներ եկան: Վերջապես հայտնվեց հայրս՝ գյուղի քահանա տեր Վարդանը: Ինձ տեսավ, գրկեց ու երկար ժամանակ լաց էր լինում և ոչինչ չէր խոսում:*

*Հաջորդ օրը հայրիկիս հետ գնացինք մեր գյուղ: Ես ճանապարհին ամեն ինչ պատմեցի նրան: Գնացինք ուղիղ ողջակեզների գերեզմանը, ուր խմբվել էին վերադարձած գյուղացիները՝ զոհերի հարազատները: Նրանցից ոմանք, հատկապես ջահելները պարկերով ու պատգարակներով հող էին կրում ու ծածկում այրվածների աճյունները: Հետագայում էլ հողով գրեթե հարթեցրին մեծ փոսորակը, ավելի ուշ՝ վաքսունական թվականների վերջերին, ողջակեզների հիշատակին կառուցեցինք մի համեստ հուշակոթող, որը կանգուն է մինչև օրս:*

*Մայիսն անցել էր արդեն, օր-օրի գալիս էին գյուղացիները՝ մեծ մասամբ տղամարդիկ, նաև ընտանիքներով: Եկան նաև հորեղբայրս ու մեր ազգականներից՝ մի քանիսը: Մինչև ամառվա վերջը հավաքվեցին քառասունմեկ՝ ընտանիքները կորցրած տղամարդ և մի քանի ընտանիք՝ առանց ընտանիքի գլխավորի: Թեև ծանր ու դժվարին պայմաններում, այնուամենայնիվ կյանքը շարունակվում էր: Ընտանիքները կորցրած ջահելներն ու միջին տարիքի տղամարդիկ ամուսնացան, ընտանիքներ կազմեցին, ծնվեցին երեխաներ, գյուղական կյանքն աստիճանաբար մտավ իր հունի մեջ: Եղեռնից փրկված գաղթականներից մի խումբ՝ շուրջ հիսուն ընտանիք, տեղավորվեցին մեր գյուղում: Գյուղը զգալիորեն ընդարձակվեց: Աստիճանաբար ստեղծվում էր թեև նվազագույն, բայց համեստ ապրելու որոշ պայմաններ:*

*Այս ամենով հանդերձ՝ կորուստների ցավը մշտապես նստած էր բոլորիս սրտերում և իրեն զգացնել էր տալիս, և երբ գյուղացիներս, առօրյա աշխատանքից ու հոգսերից բեռնաթափվելու համար հավաքվում էինք զրուցելու՝ մեկ էլ տեսար աննկատելիորեն թեման փոխվում էր դեպի մեր այդ ցավը...»:*

* * *

Ահա Ալեքսանդրապոլ գավառի Աշոցքի սարահարթի Վարդաղբյուր գյուղի 1919-ին ողջակիզվածներից միակ վերապրածի՝ Արտաշես Բալոյանի՝ իմ գրառած վկայությունը, որ ներկայացվում է ամենայն ճշգրտությամբ:

Բոլոր կորուստները հաշվելով ու ի մի բերելով արձանագրվել էր եղերական իրադարձության ողբերգական արդյունքը՝ 196 ողջակիզված անմեղ զոհ, որոնք երկար տարիներ պետք է դառնային ողբերգությունից ընդարմացած համագյուղացիների չապաքինվող անմոռաց հիշողությունը: Չէ որ նրանցից ամեն մեկը կորցրել էր հինգից յոթ հարազատ:

## Աղբուլաղ (Հզազի ձոր) գյուղի 1920թ. ողբերգությունը

ՄԿՐՏԻՉ ԽԱՆԶԱԴՅԱՆ

1920թ. թուրքական արշավանքի ողջ պատմությունը չէ, որ պիտի ներկայացնեմ: Այդ մասին հարյուրավոր գրքեր են գրվել: Ես պետք է ներկայացնեմ այն արհավիրքը, այն մեծ ողբերգությունը, որ բաժին ընկավ հատկապես մեր՝ Աղբուլաղ (ներկայումս Սպիտակի շրջանի Լուսաղբյուր) գյուղին, նաև հարևան երկու՝ Ղարաբոյա (Խնկոյան) և Ղալթախչի (Հաղթագյուղ) գյուղերին:

Դեռ 1918թ. թուրքերը մտել էին մեր գյուղը ու թեև մասսայական կոտորածներ չէին սարքել, բայց շատ մարդկանց էին գերևարել, գյուղը թալանել և ինչ հնարավոր էր եղել տարել էին: Բայց դա նախերգանքն էր միայն, իսկ սարսափելին գալու էր ավելի քան երկու տարի հետո, 1920թ. աշնանը: Ինչպես հայտնի է 1920թ. աշնանը թուրքերը գրավելով Գյումրին, շարժվեցին դեպի արևելք: Ջաջուռի լեռնանցքում թուրքերի առաջխաղացումը կասեցվեց՝ հայկական նահանջող զորամասի ցաք ու ցրիվ ջոկատը և նրան միացած Աղբուլաղի (Լուսաղբյուր) և շրջակա մի քանի գյուղերի բնակիչները փակեցին թուրքերի ճանապարհը: Սակայն թուրքերին հաջողվեց Փամբակի հովիտը մտնել այլ ճանապարհով: Նրանք, շրջանցելով լեռնանցքը, Ղալթախչի գյուղի թիկունքից, Փամբակի լեռնաշղթայի մի կտրվածքից, ներխուժեցին Ղալթախչի և շրջափակման մեջ առան հարևան գյուղերը՝ Ղարաբոյան, Աղբուլաղը և Ղալթախչի երկաթուղային կայարանը ու փակեցին Ջաջուռի թունելի արևելյան մուտքը և դեպի Գյումրի գնացող խճուղային ճանապարհը: Նույն օրը հենց գյուղի մեջ, իրենց տներում նրանք սրի քաշեցին Ղալթախչիի, ապա, անցնելով Ղարաբոյա, նաև Ղարաբոյայի բնակչությանը: Այդ նույն օրը թուրքերը Ղալթախչիից շարժվել էին դեպի Աղբուլաղ, բայց հանդիպելով ինքնապաշտպանական ուժերի՝ Ղալթախչի կայարանից և գյուղից գնդակոծմանը, նորից նահանջել էին Ղալթախչի:

Այդ գիշեր նահանջել էին նաև լեռնանցքը պահող բանակի մնացորդները:

Թուրքերն Աղբուլաղ էին մտել նոյեմբերի 16-ին: Թուրքերի գյուղ մտնելուց քիչ առաջ հայրս մեծ քրոջս՝ Կատարինեի և մեծ եղբորս՝ Արշակի հետ կարողացել էր գյուղից հեռանալ: Նրա ընտանիքի մյուս անդամները՝ մայրը (տատս), կինը, չորս աղջիկները (Արուսը, Կալիխսեն, Հայկանուշը և Եպրաքսյան), երկու եղբայրների կանայք, որոնցից մեկը չորս օր առաջ էր ծնունդ բերել միայն, մնացել էին տանը: Ձյունը նստել էր երկու օր առաջ: Գյուղի տանուտերն՝ Այվազ Դանիելյանը, մի քանի մարդկանց հետ, աղ ու հացով գնացել էր թուրքերին ընդառաջ: Թուրք փաշան ոչ միայն աղն ու հացը չէր ընդունել այլև տեղն ու տեղը սպանել էր նրանց և մտել գյուղ: Գյուղ մտնելով՝ նրանք իրականացրել էին նախապես կայացրած որոշումը: Ասկյարները մտել էին տները, ժողովրդին խաբելով դուրս էին հանել տներից՝ իբր տանում են եկեղեցի հաշվառման:

Այդ պահին գյուղում տեղացիներից բացի, համարյա նույնքան էլ փախստականներ կային Կարսից և Գյումրիից: Մի քաղի մարդկանց հավաքել էին եկեղեցու բակում, իսկ մյուս քաղի ժողովրդին՝ Դուրգարենց կալում: Հետո բոլորին միավորել էին մի տեղ և լցրել Թոփչանց գոմը և բակը: Այս տան առջևից էր անցնում դեպի Գյումրի գնացող խճուղին: Այստեղ տղամարդկանց և դեռահաս տղաներին առանձնացնելով նրանց տարել էին Դայրագյոզյան Վարդանի և Մաթոսի գոմն ու մարագը ու փակել այնտեղ: Նրանց միջից էլ առանձնացնելով տեր Մկրտչին, կենդանի-կենդանի խաչել էին գոմի դրսի դռան վրա: Ապա նավթ էին լցրել և այրել գոմն ու մարագը:

Քույրս պատմում էր սահմռկեցուցիչ փաստեր, որ երբ թուրքերն իրենց տնից դուրս էին հանում, հարևան Սկոյենց Կարապետի մարագում, խոտի մեջ, հայտնաբերում են մի քանի թաքնված տղամարդկանց: Անմիջապես հրդեհում են տունն ու մարագը: Թաքնվածները դուրս են սողում խոտի միջից: Նրանց բռնում և պողպատալարով կապում են միմյանց, նավթ լցնում նրանց վրա և այրում: Եվ, ավելի սահմռկեցուցիչ մի փաստ՝ թուրքերը բերում են դեղ-զուռնա, նվագում, իսկ երբ իրար կապած այդ մարդիկ, կրակի բոցերից այրվելով թռչկոտում էին, իրար ձգում, որ ազատվեն կրակից, թուրքերը չարախնդորեն հռհռալով գովում էին նրանց այդ «մահվան պարը»: Հետո դեղ-զուռնան տեղափոխվում է այն գոմի և մարագի առաջ, որտեղ այրվում էին մյուսները:

Առա՝ տղամարդիկ այսպիսի վայրագ ձևով դարձան հրի ճարակ: Քանի՞ մարդ է այրվել գոմում և մարագում: Ճշգրիտ թիվը չկա: Մոտավոր հաշվարկներով՝ մոտ հինգ հարյուր մարդ:

Հետագայում, 20-ական թվականների կեսերին, երբ Վարդան ամին հին գոմի տեղը նորը պետք է կառուցեր, այդ ողջակիզվածների ոսկորներն արևերես ելան: Վարդան ամին հավաքեց նրանց աճյունը և հանձնեց հողին:

Կանանց և երեխաներին թուրքերը շրջափակված պահել են մինչև երեկո: Երեկոյան, արևամուտից քիչ առաջ, նրանց դուրս են բերել ճանապարհի վրա, բաժանել երկու, թե երեք խմբերի և քշելով տարել դեպի Ջաջուռի լեռնանցքը: Նրանց համոզել են, թե տանում են Գյումրի: Մահապարտների այս թափորն ասկյարների ուղեկցությամբ շարժվել է դեպի արևմուտք, դեպի Ջաջուռի լեռնանցքը: Գյուղից մինչև լեռնանցքը մոտավորապես երեք կիլոմետր է: Ճանապարհին ասկյարները մի քանի անգամ կանգնեցրել են նրանց և խուզարկել, խլել նրանց մոտ գտնվող ոսկեղենը և այլ թանկարժեք իրեր: Ճանապարհին մի քանի զառամյալ կանանց և հիվանդների, որոնք դժվարանում էին քայլել, տեղնուտեղը սպանել են: Երբ մահվան թափորը հասել էր լեռնանցքին, մթնել էր արդեն: Մոտեցել էին Հզազի ձորին: Դեռ ձորին չհասած՝ լսվել էր աղիողորմ լացի ձայներ, ճչոցներ և սարսափելի տնքոցներ. իրենցից առաջ հենց նոր էին ավարտել մի այլ թշվառ խմբի կոտորածը, որոնց բերել էին Շիրակի դաշտի գյուղերից և Գյումրիից:

Ականատեսները պատմում էին, որ երբ թափորի գլուխը շուռ տվեցին կամրջից դեպի վեր, դեպի ձորի խորքը, սկսվեց աղիողորմ լացն ու վայնասունը, գոռգոռոցն ու աղմուկը: Ամբոխը մի պահ կանգ առավ, չուզեց ենթարկվել ասկյարներին: Մի անվախ կին սկսեց սառած քարեր շպրտել ասկյարների վրա: Վրա հասած ասկյարները տեղնուտեղը սվինահարեցին նրան: Չանսալով կանանց և երեխաների սրտաճմլիկ լացուկոծին՝ նրանց քշեցին ձորի խորքը: Այնտեղ, ձորի մեջ փռված էին բազում դիակներ, որոնց մեջ դեռևս կային մահամերձ, ծանր վիրավորներ: Քիչ վեր՝ զառիթափն էր: Ժողովրդին քշեցին դեպի զառիթափի եզրը: Լսվեց երկու հրացանազարկ: Դա կոտորածը սկսելու ազդանշանն էր: Զառիթափի եզրին խմբված կանանց ու երեխաներին սվինահարում և շպրտում էին ձորը... Բոլորին սվինահարելով և շպրտելով ձորը այդ՝ մարդկային դեմքը կորցրած գազանները զառիթափից իջան, մտան ձորը և կատարեցին «ստուգողական գործողությունը» ու հեռացան կեսգիշերից հետո միայն: Երբ ամեն ինչ վերջացավ, լուսադեմին, ովքեր դեռ շնչում էին, ովքեր «պատահաբար» հրաշքով կենդանի էին մնացել, իրար ձայնելով դուրս եկան դիակների կույտի միջից...

Քանի՞ հոգի են դուրս եկել դիակների միջից, ճշգրիտ թիվը հայտնի չէ: Ըստ երևույթին 70-100 մարդ: Ցյուն էր, ցուրտ և սառնամանիք: Այդ թշվառներից ոմանք, որոնք կենդանի էին մնացել, ցրտահարվեցին: Ցրտահարվածներից ոմանք, որ կենդանի էին մնացել, ապրում էին մեզ հետ, մեր կողքին (Քա-

բայան Աղշակ և Նախշուն, Ղազարյան Ստեփան, Կիրակոսյան Բալաբեկ, Սարգսյան Գուրգեն): Այս սպանդից փրկվածներն ահավոր բաներ էին պատմում, որոնք բոլորը գրի առնել հնարավոր չէ:

Հարկ եմ համարում երկու վկայություն միայն մեջբերել: Ես դրանք գրի եմ առել ըստ նրանց պատմածի, անփոփոխ: Քրոջս՝ Հայկանուշին, ձայնագրել եմ և տեսագրել: (Տեսագրությունը գտնվում է Երևանի Ցեղասպանության թանգարանում):

Հայկանուշը ծնվել է 1909թ.: Ամուսնական ազգանունն Աշուղաթոյան է, ապրում է Սպիտակի շրջանի Մեծ Պարնի գյուղում, ունի երեք տղա և մեկ աղջիկ: Ահա նրա պատմածը.

*«Չյունը նոր էր եկել: Կռիվը գնում էր Գյադուկում (լեռնանցքի անվանումը – Մ. Խ.): Թուրքերը Ղալթախչի մտան Բոյախչվից: Գյադուկից մեր զորքերը փախան: Թուրքերը մեր գյուղը մտան հաջորդ օրը: Մենք չէինք իմացել, որ Ղալթախչիի և Ղարաբոյայի ժողովրդին կոտորել են: Գյուղի քյոխվան աղ ու հացով էր դիմավորել թուրքերին, որոնք տրով խփել և աղ ու հացը թափել էին գետնին, իսկ քյոխվային սպանել:*

*Ահա այդ ժամանակ էր, որ հայրս մեծ քրոջս և միակ եղբորս վերցրեց և փախավ: Տատս չթողեց, որ հայրս մեզ էլ վերցնի: Տանը մնացինք տատս, մայրս, չորս քույրերս, հորեղբայրներիս երկու կանայք՝ Շողերը, որ չորս օր առաջ էր ծննդաբերել և Արուսյակը: Մեր տանն էին ապրում նաև երկու փախստական: Նրանք Բերնեցի էին՝ մայրը և իր տասնվեց-տասնյոթ տարեկան տղան: Այդ ժամանակ գյուղում շատ փախստականներ կային:*

*Երկու ասկյար մտան մեր տունը և պահանջեցին անմիջապես դուրս գալ տնից: Ասացին, թե պետք է գնանք եկեղեցի՝ ցուցակագրվելու: Իբր թե այնտեղ նպաստ են բաժանելու, որ հետո մեզ տանեն Գյումրի: Տատս շատ խնդրեց, գոնե տեղաշորով պառկած ծննդկանին թողնեն տանը մնալ, բայց չլսեցին: Երբ դուրս եկանք կալը, արդեն վառվում էին Սկոյենց Կարոյի տունը և մարագը: Թուրքերը նկատել էին, որ մարագի խոտի մեջ մարդիկ կան թաքնված և դրա համար վառել էին այն: Այդ մարդիկ արդեն դուրս էին եկել խոտի միջից և նրանց պողպատալարով կապել էին միմյանց: Դրանց մեջ էր նաև իմ մորական պապը՝ Աղաբաբյան Դավիթը: Մեր ներկայությամբ նրանց վրա նավթ ցանեցին և վառեցին: Թե ինչպես էին նրանք գոռում, գոչում, լալիս, իրար ձգում և թոչկոտում, պատմել չի լինի: Այդ ժամանակ հայտնվեց դեղ-զուտնան, որը սկսեց նվագել մի պարեղանակ: Թուրքերը հրճվում էին, ծափ տալիս և գովում նրանց «պարը»: Շուտով դադարեց նրանց լացը, և դժբախտներն անշնչացած փռվեցին գետնին: Նրանք տաս-տասներկու հոգի էին: Մեզ տնից հանեցին և տարան գերեզմանոցի կողմը: Եկեղեցու ճանապարհն այնտեղով էր անցնում: Հետո նկատեցին, որ ժողովուրդը հավաքվել է Դուրգարենց կալում: Մեզ էլ շուտ տվեցին և տարան այնտեղ կուտակված ժողովրդի մոտ: Այնտեղ հավաքել էին մեր թաղի բնակիչներին և այս թաղում պատսպարված փոխստականներին: Ջոկեցին տղամարդկանց և պատանիներին, մյուսներին տարան լցրին Թոփչանց գոմը:*

*Արևը թեքվել էր դեպի մայրամուտ, երբ մեզ հանեցին գոմից և կանգնեցրին ճանապարհի վրա, Մնացականյան Գարենի տան առաջ: Տան մեջ թաքնված էր մնացել Գարենի մայրը՝ Զաղլուն, որին դուրս քաշեցին տնից և այդքան ժողովրդի առջև սվինահարեցին: (Երբ 1921թ. գյուղ վերադարձանք, Գարենը գտավ իր մոր դիակը և թաղեց իրենց տնամերձի բարդիների տակ):*

Երբ հասանք Գյադուկին, մութն ընկավ: Գյադուկում մի շենք կար, որն արդեն այրված էր: Այդ շենքից մինչև Հզազի ձորը մի կես կիլոմետր էր: Այստեղ մեր ականջներին հասան ձորից եկող լացի և ողբի ձայները: Երբ հասանք ձորի կամրջին, մեզ շուտ տվեցին դեպի ձորի խորքը: Ձորը լիքն էր դիակներով: Մեզ էլ քշեցին ձորաբերանի զառիթափը և խշտիկներով խփելով փաթեցին ձորը:

Երբ մորս խփեցին, ես նրա հետ ընկա ձորը: Մայրս և մյուս քույրերս ընկան ինձ վրա: Ես մնացի նրանց տակը և այլևս ոչինչ չտեսա: Լսում էի մորս տնքոցը միայն, որի արյունը լցվում էր ինձ վրա: Ես լուռ էի: Երկար մնացի այդպես պառկած: Ուշօրեք ձայները կտրվեցին: Կարծես ամեն ինչ խաղաղվեց: Լսեցի մի կնոջ ձայն, որը ասում էր, թե ով կենդանի է, թող դուրս գա: Ես էլ դուրս եկա: Մայրս պառկած էր մեջքի վրա, որովայնի լայն բացված վերքից դուրս էին թափվել աղիքները: Ես վրա բերեցի հագի շորերը և նրանցով ծածկեցի աղիքները: Եվ որովհետև սաստիկ մրսում էի ու դողացնում, միայն կարողացա մորս գլխաշորը և ժակետը վերցնել: Շարժվեցինք ձորն ի վեր: Այդտեղ գտա հորաքրոջս՝ Խանումին, որը ծանր վիրավոր էր և չէր կարողանում քայլել: Օգնեցի նրան: Վեր կացավ, քայլեց:

Հասանք Ջաջուռի յայլան: Մի օր մնացինք այնտեղ: Մեզ հետ էր մեր հարևանուհի Մարանը՝ Սկոյենց Գոքորի կինը: Նա ևս ծանր վիրավոր էր, բայց անվնաս էին մնացել նրա երեք տղաներ՝ Գևորգը, Ավետիքը և Անդրանիկը:

Հաջորդ օրը գնացինք Քեֆլի: Մարանն իր երկու փոքրիկներին՝ Գևորգին և Ավետիքին, թողեց քարափի տակ: Իր հետ վերցրեց միայն Անդրանիկին, որին Քեֆլիում սպանեցին թուրքերը: Մեր բոլորի աչքերի առջև կտրեցին նրա գլուխը... Մի քանի օր մնացինք մի գոմում: Մեզ կերակրում էին: Մեր մեջ կար մի երիտասարդ կին, որը գիշերը ծննդաբերեց: Նորածնին խեղդեցին:

Թուրք փաշան մեզ թույլատրեց գնալ: Բայց ո՞ւր: Հորաքույրս դեռ կենդանի էր: Տեղափոխվեցինք հարևան Մարիար գյուղը: Տեղավորվեցինք մի տան մեջ: Գիշերը ներս մտան ասկյարները և տարան ջահել կանանց և աղջիկներին: Մոտեցան հորաքրոջս, բայց նա շատ ծանր վիրավոր էր: Քաշեցին նրան, հետո հրացանի կոթունով մի քանի անգամ խփեցին և գցեցին ոտքերի տակ: Նրանց գնալուց հետո ուզեցինք ընկած հորաքրոջս վերցնել, բայց նա արդեն մեռել էր...

Մեզ կերակրում էին: Օրական մի հում կարտոֆիլ և մի բուռ գարի էին տալիս, ուրիշ ոչինչ: Այստեղ գտա հարազատ մորաքրոջս՝ Ոսկեհատին, որը մաքրեց շորերս և մազերս, ապա լողացրեց: Մի քանի օր հետո մորաքրոջս և նրա ամուսնու հետ տեղափոխվեցինք Քյուլլիջա [այժմ Մարահարք – Մ. Խ.], որտեղ և գտա հորս:

Մի քանի ամիս հետո, գարնան մի օր, լսեցի, որ թուրքը հետ է քաշվել, և վերադարձանք գյուղ: Գյուղում միայն ավերակներ էին: Քանդել և ավերել էին մեր տունը: Հայրս գնաց Հզազի ձորը՝ կնոջ և երեխաների դիակները գտնելու... բայց չէր կարողացել ճանաչել իր հարազատներին: Ավելի քան հինգ ամիս դիակները մնացել էին բաց երկնքի տակ, այլակերպվել էին, գազաններն էին հոշոտել, և դարձել էին անճանաչելի»:

* * *

Համարյա նույն բովանդակությունն ունի նաև Սարգսյան Գուրգենի պատմածը: Սարգսյան Գուրգենը ծնվել է 1912թ., ասել է թե՝ 1920թ. ութ տարեկան է եղել: Նա ևս փրկվել է՝ մնալով դիակների տակ: Իր վրա պառկածն իր մայրն է եղել: Գուրգենի աջ ձեռքը մնացել է ջրի և մի քարի արանքում և չի կարողացել դուրս հանել: Նրա վրա լցվել է հարազատ մոր և մյուս դիակների արյունը: Ինքը պառկած լինելով առվակի մեջ, համարյա ամբողջովին սառել է: Այսպես պառկած մնացել է մի քանի ժամ, ցրտահարվել են ոտքերը և ձեռքերը: Դիակների տակից դուրս գալուց հետո միայն զգացել է, որ խեղված է աջ ձեռքը:

* * *

Հզազի ձորում տեղի ունեցած սպանդի մասին թեև գրվել է, բայց մինչև հիմա պատշաճ գնահատականի չի արժանացել: Գուցե ոմանց թվացել է և այժմ էլ թվում է, թե թուրքերի կատարած ցեղասպանության բազմաթիվ իրական գործողությունների շարքում այս մեկն այնքան էլ նշանակալի տեղ չի զբաղեցնում միլիոնավոր մյուս զոհերի կողքին:

Բայց այս դեպքը բոլորովին այլ երանգ ունի: Նախ՝ զոհվածների թիվը բավականին մեծ էր, և հետո՝ զոհվածների մեջ չի եղել ոչ մի հասուն տղամարդ: Տղամարդկանց կենդանի-կենդանի այրել են հենց գյուղերում: Այստեղ են քշել միայն կանանց և երեխաներին: Բացի այդ՝ այս ոճրագործությունը կատարվել է, ոչ թե թուրք և քուրդ խուժանի կողմից, ինչպես օտարներին ուզում են հավատացնել Արևմտահայաստանում կատարված ջարդերի հեղինակների հետնորդները, այլ՝ կանոնավոր բանակի ձեռքով: Ասել է թե՝ չի կարելի Հայոց ցեղասպանությունը սահմանափակել միայն Արևմտահայաստանի հայաբնակ շրջաններում տեղի ունեցած ոճրագործություններով: Դեռ մինչև վերջ ճշտված չէ, թե որքան զոհեր եղան 1920թ. քեմալականների արշավանքի ժամանակ: Խոսքն ամբողջ Կարսի մարզի, Սուրմալուի գավառի, Գյումրիի և նրա մերձավոր շրջանների, Նախիջևանի և այլ վայրերից տեղահանված տասնյակ հազարավոր հայերի կոտորածի մասին է:

## Մի դրվագ 1920թ. ցեղասպանությունից
### (վերապրածի վկայություն)

*«Ութ տարեկան էի, երբ թուրքական բանակը մոտեցավ Ախուրյանի շրջանի Չրախլի (այժմ Ջրառատ) գյուղին: Գյուղի բնակիչները, ով ինչպես կարող էր, փախչում էին գյուղից, թողնելով իրենց ամբողջ ունեցվածքը: Այդ ժամանակ ես ութը տարեկան էի և հիշում եմ այն վայրագությունները, որոնք կատարվում էին հայերի հանդեպ: Ես էլ իմ ծնողների հետ, խառնված գյուղի ժողովրդին, փախչում էի գյուղից: Ժողովրդի հոսքը այնքան մեծ էր, որ մեկը մյուսին հրմշտելով աշխատում էին ինչքան կարող են առաջ անցնել: Եվ ահա այդ ժամանակ ես կորցրի իմ ծնողներին: Սոված էի և հոգնած, լաց էի լինում և կանչում իմ ծնողներին: Փախչող հոսանքը ոչ մի ուշադրություն չէր դարձնում իմ վրա:*

*Որոշ ժամանակ անց փախչող ժողովրդի մի մասը ճանապարհից հետ դարձավ դեպի գյուղ: Վերադարձող ժողովրդին հրմշտում, ծեծում, ջարդում էին թուրքական զինվորները: Եվ վերջապես հասանք գյուղ, այն գյուղը, որտեղից մենք փախել էինք: Փողոցներում փռված էին մարդկային դիակներ: Թուրքական զինվորների*

*հրմշտոցից ես վայր ընկա դիակների մեջ: Երեկոյան, թուրք զինվորները, կարծելով ինձ մահացած, ժողովրդին հրելով, ծեծելով տանում էին: Որոշ ժամանակ անց ես լսեցի մարդկային ճիչեր, լացուկոծ, աղաղակներ: Դու մի ասի՝ ժողովրդին լցրել էին մի տան մեջ և կենդանի այրել էին նրանց: Բոցն ու ծուխը պատել էր գյուղի մեծ մասը:*

*Անցավ ժամանակ, չգիտեմ թե որքան ժամանակ, դադարեցին այդ լաց ու ճիչերը, և ես վերկացա ու գնացի դեպի մեր տուն, որը հեռու չէր այն տնից, որտեղ ողջակիզել էին ժողովրդին: Տանը ոչ ոք չկար, մութ էր, ինքս սոված էի, հոգնած և որպեսզի մենակությունից ազատվեմ՝ տանից դուրս եկա և մի անորոշ ճանապարհով քայլեցի: Գյուղի ծայրին ես հանդիպեցի մեր գյուղացիներից մի քանիսին: Նրանք ինձ օգնեցին, հետները տարան Խանկալի գյուղը, որը հիմա գոյություն չունի, իսկ բնակիչները տեղափոխվել են Մերմանդար: Այն տունը, որտեղ ողջակիզել էին գյուղի ժողովրդին, չխնայելով ոչ ծերունու և ոչ էլ մանուկին, պարսպափակված է և գտնվում է պետության հսկողության տակ: Ահա այն դեպքը, որին ես մասնակից եմ եղել:*

*Այժմ ես բնակվում եմ Չարենցավան քաղաքում, իմ հասցեն է՝ ք. Չարենցավան, II միկրոշրջան, II թաղամաս, 8-րդ շենք, 30 բնակարան:*

Ցոլակ Գրիգորի Թորոյան»:

## Վերապրածի վկայություն

Ըստ մորս՝ Վարդահուշ Խաչատրյանի (ծնված 1898թ.) վկայության

1920թ. դեկտեմբերին չհայտարարված պատերազմով քեմալական զորքերը գրավելով Ալեքսանդրապոլը՝ հասան մինչև Սպիտակի շրջանի Նալբանդ գյուղը՝ հիմնելով «թուրքի սահմանը» և կանգ առան: Այդ ժամանակ Սպիտակի շրջանի Ղարաբոյա գյուղը (այժմ Խնկոյան) մնաց «թուրքերի սահմանի» մեջ: Առավոտյան թուրքերը մինչև ատամները զինված լցվեցին Ղարաբոյա գյուղը: Նրանք հավաքեցին գյուղի ողջ բնակչությանը և հայտարարեցին, որ տղամարդիկ գնան գյուղի եկեղեցին և դպրոցը, իսկ կանանց՝ խաբելով հայտնեցին, որ իրենց ձեռքերի մեջ պետք է կնիք խփեն և ում ձեռքի մեջ կնիք չլինի, տեղում կսպանեն: Գյուղի արևմտյան մասում մի բլրակ կար: Այդ բլրակի վերևից ներքև ձգվում էր մի բավականին խոր ձոր: Կանանց առաջնորդեցին այդ ձորը: Նրանց շորեցին ձորի երկու կողմերում՝ վերևից ներքև: Հրացանի ծայրերին ամրացված սվիններով թուրքերը բաժանվեցին երկու խմբի: Մի խումբը կանգնեց ձորի մի կողմում, մյուս խումբը՝ ձորի մյուս կողմում կանանց թիկունքում: Թուրքերը սվինահարելով կանանց լցրեցին ձորը: Մայրս այդ կանանց մեջ է եղել, նա հղիության վերջին օրերն է ապրել և չի կարողացել տեղից շարժվել: Թուրքերի սվինահարելու ժամանակ, նա հազիվ-հազ ձորի պռունկով սահել է ցած՝ մի ոտքով կանգնել ձյան մեջ, իսկ մյուս ոտքը ծալվել է, որի վրա ընկել է մի դիակ: Մայրս վախից այդ դիակը քաշել է իր վրա, որպեսզի թուրքերն իրեն չնկատեն: Թուրք ջարդարարները հրացանների սվինները դեպի ներքև պահելով, ձորի երկայնքով մի քանի անգամ քայլելով և սվինահարելով դիակները, հեռացել են ձորից: Թուրքական սվիններն անցնելով մորս վրա գտնվող դիակից՝ երկու սանտիմետր խորությամբ ինը տեղից վիրավորել էին նրա թիկունքը:

Տղամարդկանցով լցված եկեղեցու դռները թուրքերը փակել, լուսամուտներից կրակելով սպանել էին բոլորին, իսկ դպրոցում լցվածներին՝ այրել: Առավոտյան լույսը բացվելու պես դեպի ձորն են եկել հինգ թուրքեր և նորից

սվինահարելով դիակներին՝ վերադերձել գյուղ: Այդ գործողությունները կրկնվել են երեք օր: Չորրորդ օրն առավոտյան հինգ թուրք և մեկ թարգմանիչ ճորից եկել են ձոր և հայտարարել, որ «փաշայի կողմից հրաման է եղել դադարեցնելու հայերի նկատմամբ կատարվող բոլոր տեսակի գործողությունները, ով որ կենդանի է թող ձայն հանի»: Մայրս անմիջապես ձեռքը վեր է բարձրացրել, թուրքերը շտապել են մոտ և ուզեցել են վեր բարձրացնել, բայց հնարավոր չի եղել, քանի որ դիակներին հոսած արյունից և ուժեղ սառնամանիքներից դիակները իրար էին կպել և վրայի հագուստը հանելով, սպիտակեղենով նրան դուրս են քաշել ձորից: Թուրք սպան տեսնելով մորս վիճակը, կարգադրել է զինվորին հանել իր շինելը և հագցնել մորս, գոտին կապելով պառկեցրել են ձյան վրա և քաշելով բերել մինչև գյուղ՝ մեր տուն, որտեղ թաքնված է եղել հայրս: Տան մեջ թուրք ջարդարարներից թաքնված են եղել նաև հորեղբորս տասներկու տարեկան աղջիկը, ես՝ երկու տարեկան (1918թ. ծնված), և մեր ազգականների երիտասարդ երեք հարսներ: Ցրտից այնքան էր մորս դեմքը ուռել, որ ես չեմ ճանաչել մայրիկիս: Այդ ժամանակ թուրք հրամանատարը կարգադրել է զինվորին, որ վառելիք ճարի և թոնիրը վառի: Վառելուց հետո զինվորներին ուղարկել է գյուղի մեջ իրենց նստավայրերը: Մնալով մայրիկիս մոտ նա խոսել է հայերեն և ասել, որ մայրը հայ է, իսկ հայրը՝ թուրք պաշտոնյա: Այստեղ գալուց առաջ մայրն իրեն խնդրելով՝ պատվիրել է, որ եթե դու սնվել ես իմ կաթով՝ հայի արյունը չպետք է թափես: «Թուրք» սպայի անունը Շեկո էր: Ահա թե, որտեղից էր գալիս «թուրքի» բարեգթությունը: Հայրս այս բոլորը լսելով թաքնված տեղից դուրս է եկել: Մայրս ժամանակ չկորցնելով՝ հորս խնդրել է «քանի դեռ լույսը չի բացվել, սարերի վրայով գնա, որ թուրքերը քեզ չնկատեն եղբորս խաբար տար, որ գա ինձ տանի» (Մայրս եղել է Նալբանդ գյուղի աղջիկ): Հայրս դուրս գալով տանից, մինչև լույսը բացվելը՝ հասել է Թափանլի գյուղը, որը Նալբանդից հեռու է 1 կմ: Այդ տեղից իմաց է տվել մորս եղբորը, որը մեծ ջանքերի գնով հասել է Ղարաբոյա՝ մորս տեղափոխելու համար: Սակայն, ավաղ, մինչև Ղարաբոյա հասնելը՝ մայրիկիս մեր տան եղած մարդկանց հետ թուրքերը տեղափոխել են Ղալթախչի գյուղը: Մի մեծ շինության մեջ, որտեղ հավաքել են հայ կանանց, երաժշտության տակ ծաղրուծանակի են ենթարկել նրանց: Այդ ժամանակ մայրիկիս եղբայրն իմանալով քրոջ տեղը, գնացել վերցրել է մերոնց բոլորին և տեղափոխել Նալբանդ:

Այդ օրերին արտաքուստ ցերեկները կարծես թե խաղաղ էր անցնում, բայց գիշերները թուրքերը գաղտնի հարձակվում էին տների վրա: Մայրիկիս վիճակը գնալով ծանրացել է: Նրան Նալբանդից տեղափոխում են Քյուլուջա գյուղը: Մորս աչքերը կուրանում են և անմիջապես նրան տեղափոխում են Թիֆլիսում գտնվող գերմանական հիվանդանոց: Մայրս շուրջ մեկ ամիս բուժվում է այնտեղ: Աչքերի տեսողությունը վերականգնվում է, վերքերը լավանում են, իսկ երբ համեմատական կարգով վիճակը լավանում է՝ նրան տուն են բերում:

Մայրս ապրեց ութսուն տարի: Մահացավ 1978թ. Երևանում: Սակայն այս հրեշավոր դեպքերի եզակի ականատեսներից մեկը լինելով՝ մինչև իր կյանքի վերջը, ամեն տարի՝ սկսած դեկտեմբերից մինչև հունվարի վերջը վերապրում էր այդ դաժան օրերը և ընկնում լիթերգիական քնի մեջ:

Գրի առավ՝ Ժենյա Խաչատրյանը՝
Վարդանուշ Խաչատրյանի դուստրը, 1918թ. ծնված:

Իմ հասցեն՝ *Երևան 68, Արաբատյան 1-ին մասիվ, 10/5 շենք, 16 բնակարան:*